

որ խոստացաւ եւ անգործադիր թողուց Յեղիւքակն ալ քելով քոհացաւ, որովհետեւ առանց ատոր ալ զինսթափ ըլլալու ստիպուած էր:

Գալով Տիւրքիներուն, նախորդ պատերազմէն յոգնած ուժասպառ եւ բոլորովին անպարարատ, անկարող եղան երկրորդ եւ երկրարտեւ ընդդիմադրութեան մը, Հազիւ 30-40 օրուան չափ կրցան զինանալ, ու չարաչար յաղթուեցան այս անգամ, եւ Հայաստանի մէջ կատարուած ողբերգութիւնը հոն ալ կատարուեցաւ:

Թուրք հազարապետ մը, օր մը անոնց քաջութիւնը նկարագրելու համար հետեւեալը կը պատմէր. «Տիւրքիներուն չեխերը ընդհանուր հրամանատարի առջեւ հարցովփորձի ժամանակ կը պատասխանէին թէ՛ — Մեր զաւակները մորթեցիք, աներնիս հրդեհեցիք, գոյքերնիս թալանեցիք, եւ այլնիս ու արտերնիս ոչնչացուցիք, ասոնց ամէնքը կարելի էր օր մը մոռնալ եւ երկու ցեղերուն մէջ կըղալորութիւն վերահաստատուիլ, բայց մեր կանանց պատիւը անարգեցիք, որ անգարմանելի եւ անմոռանալի պիտի մնայ մեզ, մեր զաւակաց, մեր թոռներուն ու թոռան թոռներուն»:

Կը ցաւիմ ըսել որ Տիւրքիներու ներկայ կացութեան վրայ բան մը չպիտի կրնամ խօսիլ եւ կրկնապէս ցաւալի է որ ոչ անոնց կետ յարաբերութիւն ընկելու առիթը, եւ ոչ երկիրնին այցելելու բազմը ունեցած եմ, որ կարողանայի աւելի լայն տեղեկութիւններ տալ անոնց աշխարհագրական, քաղաքական, տնտեսական եւ բարոյական կացութեան վրայ: Պէշրութի, Իսմանոկոսի եւ Հալէպի մէջ կան թուրք որ անոնց հետ չգիտան մէջ են եւ զեւտեն բնականաբար անոնց ներքին հանգամանքները: Ո՞րքան երջանիկ պիտի ըլլայինք եթէ բարեհաճէին մեզի տեղեկութիւններ տալ այդ մասին:

ՊԱՀԼԱԿ



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

ՅԻՍԵՍԻԱՅՈՒՄ

Ամենին յայտնի է որ Ֆրանսական ազգը մեծադուններէր մինն է: Բայց այդ մեծութիւնը միայն նորա ներկայ գործերով չի չափուում, այլ եւ նրա անցեալով, որը նոյն իսկ հետաւոր ազգերի համար հետաքրքրական եւ հրահանգիչ է: Այս տեսակէտից Ֆրանսիան անցեալում այն տեսակ գործեր է կատարել, որոնցից հարկաւ միւս ազգերը մեծապէս պիտի օգտուին Ուրեմն Ֆրանսիայի քաղաքակրթական դերը տաճարական չէ եղել: Նա խթան է եղել ուրիշ ազգերու համար՝ օրինակ տալով նրանց յառադատելու շաղով ընթանալու: Բացի իր հոշակաւոր յեղափոխութիւնը, որ անմահացրեւ Ֆրանսական ազգի միտքը՝ մենք նորա պատմութեան մէջ կը գտնենք ուրիշ շատ անցքեր, որոնք շատ են աշակցել յառաջդիմութեան գործին: Ներկայումս էլ Ֆրանսան եւ չէ մնացել իր հարեւան ուրիշ մեծ ազգերից: Առ ժիջանի ստալարէզնեղում առաջնակարգ դիրք է բռնում, հնայած իր հետ կատարել կերպով մրցող ազգերին, որոնք աշխատում են խելներանից այդ առաւելութիւնը: Վերջին 1900 թվ. համաշխարհային Ցուցահանդէսում մի բան անխեղձ էր երեւում, այն է՝ որ Ֆրանսական արդիւնքները պահպանել են իր բանց նախկին համարը: Ֆրանսիական բոլոր արդիւնքներէ մէջ երեւում է եղել շնորհք, անմահ ճաշակ եւ կատարելագործութիւն: Այո՛, 1870 թվ. պատերազմում կրած պարտութիւնը Ֆրանսիայի համար մի լուրջ պատմական դաս եղաւ: Ֆրանսա լաւ նկատեց իր պակասութիւնը այդ դժբաղդ պատերազմից յետոյ: Նա իր բոլոր ուժը դրեց՝ լուսաւորութեան կազմից Ֆրանսիային եւ Չուիցերիային հաւաստաբերու: Նա այսօր անկասկած հասել է այդ նպատակին: Եթէ աւելացնենք այս առաւելութեան վրայ, Ֆրանսացու ազգային բնածին յատկութիւնները, այն ժամանակ նա կր հանգիստնայ մեր աշխիւ իրեւ: ամենէն քաղաքակիրթ ազգը եւրոպայում: Ճիշտ է, Ֆրանսիան աշխարհի զարմացրեց իր տնտեսական յառաջդիմութեամբ: Մի՞թէ աւելի զարմանք չի յարուցանում Ֆրանսական եւանդն եւ ուժը:

երբ այդ ազգը 1870 թւին կորսնցնելով ասան եւեթ միլիարդ ֆրանկ¹⁾ եւ 200,000 մարդ , չուտով կարողացաւ ոտքի կանգնել: Եթէ նոյն դժբաղդութիւնը Գերմանիային պատահէր՝ նա երբեք չէր կարող այդպէս չուտով վերականգնել իր տնտեսական գրութիւնը: Գերմանիայի արդի տնտեսական բարգաւաճումը առաջ է եկել իսկապէս այդ հինգ միլիարդ ֆրանկի շնորհիւ, որ նա առացաւ Ֆրանսիայից եւ այն երկու գաւառներին շնորհիւ (Ալզաս եւ Լորէն)՝ որ նա յափշտակեց:

Տնտեսաբան քաղաքական Ֆրանսիայում վերջին 15 տարւում ընթացքում ծագել է մի շատ սխալ երեւոյթ, որ մասամբ դոյութեան ունի եւ ուրիշ եւրոպական երկրներում: Խօսքս վերաբերում է այն զարգացած դասակարգին որ բարձր ուսում է ստանում, բայց պաշտօն չէ գտնում իր ապրուստը հայթայթելու համար: Մինչեւ այժմ բանուոր դասակարգի խնդիրն էր դրուում հասարակութիւնների աչքը , այսօր այդ դասակարգին կից դոյացել է մասաւոր պրոլետարիատը որ հետզհետէ աւելնալով՝ ստիպել հետեւեալներն պիտի յառաջ բերի: Ֆրանսիայում մի պետական պաշտօնի համար յայտնում են 50 ցանկացող-թիկնածու: Երբ դուք կարդում էք այդ երեւոյթին վերաբերող վիճակագրական թիւեր , մնում էք ապշած եւ ակամայ հարցնում թէ ո՛ւմ համար են այնքան բարձրագոյն ուսումնասիրութիւնները: Կարծես Գերմանիան եւ Ֆրանսան մրցում լինին իրար հետ թէ իրանցից որ մէկն ավելի շատ ուսանող կ'ունենայ համալսարաններում: Կար ժամանակ որ ուսումնասիրութիւնները իրատեսողութիւնը հեշտութեամբ ձեռք էր բերում պաշտօններ: Այդ երջանիկ ժամանակն , ըստ երեւոյթին , անցել է արդէն , որովհետեւ փոխուել են ընկերական պայմանները : Երիտասարդութեան համար անորոշ է ապագան եւ չէ արդիւնատեւրում նրա յոյսերը , բայց եւ այնպէս կրկնապատիկ , եռապատիկ աւելի բժիշկներ , փաստաբաններ , ուսուցիչներ եւայլն կան ըսն թէ պահանջում է երկիրը : Այսօր Ֆրանսիայում 43,000 բժիշկ կայ , որոնցից 3000 Պարիզում , մնացածը գաւառում : Ինչպէս պատմում են , այսօր 1200 բժիշկ կայ մայրաքաղաքում , որոնք չեն կարող ապրուստ ձեռք բերել իրանց գիրքին համեմատ եւ սակայն համալսարանները

(1) Պատերազմական տուգանքը 5 միլարդ էր , իսկ 12 միլիարդ ուրիշ ծախսերն էին :

Ֆրանսիային տալիս են տարեկան 1200 նորուստ բժիշկ , որոնց կէսը դործ չէ գտնում : Այս հանգամանքն անշուշտ բժիշկութեան վարկը պիտի վայր դնէ , քանի որ նա մարդու ապրուստն չի ապահովում եւ շատերին պրոլետարիատի չէ մին գցում : Նոյնը պէտք է տեսլ իրաւաբանների մասին , որոնց մեծ մասը հարկադրուած դիմում են ոչ մի իրաւաբանական կերպարանի չունեցող գործերի , նախաժողովրանց կոչման: Մասաւոր պրոլետարիատի թիւը Ֆրանսիայում ամենից շատ մեծացնում են ուսուցիչներն եւ վարժուհիները , որոնք մօտ 150,000ի են հասնում : Ընդհանուր կարծիքն այն է , որ նրանցից 100,000ը գտնուում են նիւթապէս նեղ դոյութեան մէջ , որ համարեայ չի տարբերում չքաւորութիւնից : Այդ կարգի ուսուցիչներն ստանում են 1900 մինչ 1500 տարեկան ուժիկ , որ չի կարող գոհացնել զարգացած մարդու ամենահամեստ պահանջները : Մարդ ստուում է երբ իմանում է թէ հենց Պարիզում 150 ազատ ուսուցչական պաշտօնների համար յայտնուում են 15,000 ցանկացող : Այս անկարգ պայմաններում ուսուցիչները ստիպուած դիմում են իրենց կոչման անհամապատասխան ամենատարբեր պաշտօններին՝ ապրուստ ձարելու , իսկ վարժուհիները , թողնում են ընթերցողի եզրակացութեան : Չնայած սրան , ուսանողների թիւն աւելնում է բարձրագոյն ուսումնասիրանում : Այսօր այդ թիւը հասնում է 27,000ի ամբողջ Ֆրանսիայում : Մնացից միայն Պարիզում ուսանում են 14,000 մարդ : Մնացից 23 տարի առաջ , 1878 թուին Ֆրանսիայում եղել են ընդամենը 10,972 ուսանող : Ուրեմն նրանց թիւը այս կարճ ժամանակում համարեա թէ կրկնապատկուել է : Ուսանողների մեծամասնութիւնը պատկանում է չքաւոր դասակարգին , եւ ննայած դրան՝ նրանք դարձեալ պատերազմում են՝ մի այնպիսի ասպարէզի համար որ նրանց չի ապահովելու : Գոյթիկեան կոչը տեղի եւ անտանելի կերպարանք է առել ուսումնասիրութիւնը մարդկանց յարմար ապարհիւններում : Կեանք մահելիս՝ նրանք հիւսիսաբանում են , իշխող պայմանները ամենայն դաւանութեամբ հալածում են նրանց : Սխալ է գնալով աւելնալում է դժգոհ մարդկանց բանակը եւ հասարակութեան : Գոյթիկեան դիմում է իրանց անտանելի դոյութեան խնդիրը : Նոյն թիկ պաշտօն գտնողներն ստա-

նում են անբաւական վարձատրութիւն՝ թանգ ապրուստի ծախքերը ծածկելու համար Սրանից քառասուն տարի առաջ երեք հազար ֆրանկ ոտնիկը հաւասար է եղել ներկայ ինն հազար ֆրանկ ոտնիկին, ասել է թէ դրանի այն ժամանակը սակել արժէք է ունեցել, ժիւ. դարի ճէսից սկսած մինչ այժմ դրամի գինը գնալով պակսել է, — գլխաւորապէս ոսկու եւ արծաթի շատութեան պատճառով, — հետեւաբար անհրաժեշտ մթերքների գները բարձրացել են, Բայց պետական ծառայողների վարձատրութեան չափը համարեալ թէ նոյնն է մնացել, Եւրոպական պետութիւնները ժիւ. դարի երկրորդ կիսում մեծամեծ ծախսեր արին ներքին գործերի համար, Այդ խնդրամանջը պաշտօնեաների աւելի մեծ խնդրանքներ, Դրա համար էլ ծախսերն (քրեականներն) աւելացան, իսկ այդ վերջինները հողալու համար պէտք է նոր բանորր ծանր հարկեր դրուէին ժողովրդի վրայ, նոր պայմաններում անկարելի էր ծառայողների ոտնիկներն աւելացնել, որովհետեւ այդ տեսակ դէպքում զարմեալ պիտի նոր հարկեր դրուէին, որոնք խափա կը ծանրաբեռնէին ժողովուրդի կեանքը, Ուրեմն զարմանալի չէ որ ծառայողների վարձատրութիւնն առողջաւայ պէս անարժ գրութեան մէջ է մնացել:

Մասւոր պրոլետարիատը մինոր երեւոյթ է որով լրջօրէն զբաղուած է ներկայումս ամբողջ եւրոպական մամուլը, այդ ցաւն առանձնապէս իշխում է այն երկիրներում, որոնք ռազմական են, ինչպէս են Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, եւ այլն: Իսկ Ամերիկայի Միացեալ Նահանգներն եւ Անգլիան զերծ են մնացել այդ ախտից, Այդ երկու երկիրներն իրանց յատուկ առեւտրական եւ արդիւնաբերական քանութեան թիւնն ունին. այնտեղ բոլոր երիտասարդութիւնը հաստատ զբաղմունք եւ, ապահովութիւն է գտնում արդիւնաբերական ապաքելուում, թէ ռազմական երկիրներում որքա՞ն են զարգացել մտաւոր ու ազատ պարագմունքները — ասան ձեզ թւեր, Ֆրանսիայում մտաւոր եւ ազատ պարագմունքներ. 1856 թւին 9,1 %, 1886 թւին 11,1 %, 1891 թւին 12,7 %, Ուրեմն մտաւոր պարագմունքները աւելացել են, Գերմանիայի պարագմունքներ 1856 թւին 52,9 %, 1886 թւին 47,8 %, 1891 թւին 47,3 0/0 է: Արդիւնաբերական պարագմունքները եղել են նոյն յիշուած թւերին 29,1 0/0:

25,2 0/0, 25,3 0/0. այս պարագմունքները պակսում են 10,73 0/0:

Գերմանիայի վերաբերող թիւերն աւելի եւս վատթար կերպարանք են ներկայացնում, թողնենք թիւերը եւ կանգ առնենք լուսաբանելու այն միջոցները, որ եւրոպական մասւոր առաջակրում է մասւոր պրոլետարիատի աւելման առաջն առնելու համար:

Գլխաւորապէս չուեւեւոր ծնողները իրանց որդիներին ուղարկում են համալսարանները յուսալով թէ աւարտելուց յետոյ՝ նրանք պաշտօն կ'ստանան պետական ծառայութեան մէջ: Այս պաշտօնացաւ վարակել է երիտասարդներին, որոնք անընդունակ են թափանցել կեանքի նոր պայմանների մէջ, նրանք յենւում են լոկ այն իրաւունքի վրայ, որ նրանց տալիս է բարձր ուսումը՝ պետական ծառայութեան մէջ մտնելու: Նոքա մոտանում են, որ խղիւղը այստեղ իրաւունքը չէ, Բանը այն է որ պետութիւնները կարող են արդեօք համալսարանաւարտ մարդկանց տեղ տալ իրանց հիմնարկութիւններին մէջ, Իրօղութիւնը այն է, որ պաշտօն որոնողների մեծագոյն մասը ուղղակի մերժում է ստանում պարագմունքներ չը լինելու պատճառով: Մերժումներին մէջ ընկնում է հիստաթիութիւն, դառնութիւն եւ վրդովմունք: Վիճակը ապահովալից է դառնում: Այնուհետեւ նրանց աշխուժ ճշգրտում է այն լատինական առածը, որ ասում է թէ շնտա ապրել, ապա՝ փրկեփալել: Եւ նրանք իսկ որ զիմում են այնպիսի մասնաւոր պաշտօնների որոնց համար պարագմութիւն չունին, եւ այդտեղ էլ սովաւ անպաւ կարողանում են յաղողութիւն ունենալ, Եթէ այդ է վերջը, հարցնում են, ուրեմն էլ ինչո՞ւ չպարտաւորուել այն ապարդիւր համար, որ կարող է կերակրել եւ ապահովել, Չէ՞ որ ուսման չորս ինչ տարի ապարդիւն են անցնում: Աւարտողների գլխաւոր նպատակը վիւյական ձեռք բերելն է եղած, որ ալ եւս ապաւածի համեմատ չի գնահատուում, Չուտ գերութեամբ միայն փոքրամասնութիւնն է պարագմում, որ եւ մասնաւոր առաջնորդից է կազմուած լինում: Մամուլն ալք է դարձնում այս նշանաւոր հանգամանքի վրայ եւ պահանջում է փոխել համալսարանական ուսման պայմանները. նամանաւանդ թէ երիտա-

ասարգներին կենանքի համար պատճառեմ, տա-
լով նրանց գործնական գիտելիքներ, նա-
տեղի երևույթ է մտաւոր պրոլետարիատը և
նա փրկարարութիւն է ապագայի թաղերի ա-
մենատեղից դիպաց մեկը: Բարձրագոյն ուս-
ման պատիւն ընկնում է, երբ չի կարողա-
նում փոխել մարդկանց անսպասով գրու-
թիւնից: Բայց ինչն էր նպատակը պլանաւորա-
պէս բարձր ուսում ստացողների աւելմանը:
Յայտնի է, որ սկսած 19րդ դարի կիսից, եւրո-
պական երկրները ընդամենը երկաթգիծներ
չէին զին: Այլ, գիտով հնչաւայաւ հաղորդակցու-
թեան գործը, Փոստային գործն ու ժողովու-
րդական լուսաւորութիւնը նոյնպէս ընդար-
ձակ ծաւալ ստացան: Միաժամանակ անսովոր
չափերով զարգացաւ ուղղմանութիւնը նիւ-
թագէս ազգեր կեղծելու համար: Այս բոլոր
գործերը ակամայ պիտի աւելացնէին ծառայող-
ների եղած թիւը: Այդ պահանջը արձագանք
գտաւ երկտասարդութեան կողմից, եւ պաշ-
տոնեայ դառնալ ցանկացողների հոսանքն
աւելանաւ յորդանում է: Իրերի այսօրինակ
ընթացքը նպաստել է չափից դուրս պաշտ-
աւորութիւններ: Մինչև անգամ սկսել են ա-
ւելորդ պաշտոններ ստեղծել որ մի օր օգուտ
չեն բերել եւ միայն տեղական ծախսերն են
աւելացնում, իսկ տուժող միշտ չարքաւ ժո-
ղովուրդն է մնում: Պաշտոնավարութեան ծայ-
րայից զարգացումը Եւրոպայում նկատուում է
ամենուրեք: Ֆրանսիան այդ բանում զարմա-
նալի կերպով գերազանցում է ուրիշներին:
Այստեղ 1846 թուին պաշտոնների թիւը հա-
նում էր 188,000 ի եւ պետութեանը նստում
էր տարեկան 245 միլիոն ֆրանկ: Իսկ 1896
թւին պետական ծառայողների քանակութիւ-
նը արդէն հասել էր 446,000 ի եւ տարեկան
նստում էր 927 միլիոն ֆրանկ, իսկ 230 հա-
զարը կազմում է 59 տարւայ ընթացքում ա-
ւելցած թիւը: զբանջից միայն 180 հազար
հոգի այնպիսի պաշտոններ են ստացել, որոնք
անհրաժեշտ են երկրին: Մնացած 50 հազար
պաշտոնները ստեղծել են կողմնակցութեան
չնորով, այսինքն արհեստական ձեւով՝ ի
վնաս ժողովրդական շահերի: Սա մի ամօթա-
բեր չարք է երրորդ հանրապետութեան հա-
մար: Մտաւոր ամուլը ամենայն իրավումը
լողողում է այս ուրիշ խօսքով ասած՝ հրե-
շային երևույթի դէմ: Նա պահանջու է վե-

րանորոշել արդի բարձր վարչութեան կազմը,
որ հարկը տարի դոյու թիւն աւելնալուց յե-
տը հնաքն է եւ չի համապատասխանում
ժամանակի պահանջներին: Այդ վարչութիւնն
է, որ սերտորէրին վարակել է պաշտոնացա-
ւով: Ֆրանսական վարչութեան բոլոր կազմը
կենտրոնականութիւն է և երկիրը կառավարող
բոլոր մարմինները կախումն ունին մի կեն-
տրոնից, որ ամէն բան կարգադրում է իր
նախաձեռնութեամբ: Բոլոր գաւառական մաս-
նաբաժինները ենթարկուում են կենտրոնից
տրած գործելու եղանակներին: Ամեն ինչ ֆա-
տարում է մի շարք պաշտոնական մարմիննե-
րից անցնելով, որոնք իսկպէս աւելորդ եւ
ժամաւաճառ ձեւակաւութիւններ են: Երբ դեռ
չկային այսօրուայ մեր հաղորդակցութեան
միջոցները, յիշած վարչութեան եղանակը
օգտուէտ է եղել, մասնաւոր գործերին վե-
րահսկելու նկատմամբ, ներկայումս անսահ-
ման կենտրոնականութիւնը ապարդիւն է դար-
ձել ընկերական տեսանկյունից: Նա մի ազդե-
ր է միայն, որից մարդիկ յազեցնում են իրանց
ծառայող դառնալու փուլ ծարաւը: Ֆրանսիա-
կան հասարակութեան կարծիքն այն է, որ
անպայման պէտք է փոխել կրթութեան միջո-
ցով երկտասարդների այդ վաղաժողով ուղղու-
թիւնը, երկտասարդութիւնը գործնական գի-
տելիքներով միշտ կարող է պարապուել
գտնել: Վերջապէս Ֆրանսիան շատ հարուստ
գաղութներ ունի, որոնք կարօտ են մշակող
եւ արդիւնաւորող ուժերի: Սպասում են թէ
գործնականապէս պատրաստած երկտասարդ-
ները այդ երկրները կը գնան եւ այնտեղ
անտեսակող գործունէութիւն կ'ունենան եւ
քաղաքակրթութիւն կը տարածեն: Արդէն մի
քանի օրինակներ մայր երկրին յաջողութեան
բաւարար նմուշներ են տւել եւ յոյս կայ, որ
այդ հոսանքը սովորութեան կերպարանք կտա-
նի 1): — Այս երևույթների շարքին է պատ-
կանում նաեւ ազգաբնակչութեան խնդիրը:
Թէ մանր եւ թէ մեծ ազգերին այդ խնդիրը
մտածել է տալիս, այնքան նա բարդ է եւ կա-
րեւոր: Նա մերթ բաւարար վիճակ ունի, երբ
ազգաբնակչութիւնը աճում է կանոնաւոր կեր-

1) Սերեւելի կրկնակու թնին, որից ուրիշներ
են Տուլուսում ձեռնարկել է գիւղատնտեսա-
կան գործերի եւ ունեցել մեծ յաջողութիւն:

պով եւ մերթ անբաւարար, երբ ընկալիչներին թիւը կամ չափապահն է աւելանում կամ թէ բոլորովին անչարժ է մնում: Կէս դարից աւել է, որ խնդիրը հրապարակ է եկել եւ զեռ եւս բաւականաչափ որոշ լուծում է ստացել: Բայց արդէն դիտութիւնը կարողացել է մշտակել օրէնքներ, որոնք մօտեցնում են որոշուած ճշմարտութեանը: Ի հարկէ դեռ շատ կը յայտնուին թեր եւ ղէմ կարծիքներ, որոնք յամենայն ղէպ կարող են պարզել խնդրին էութիւնը: Այդ աշխատանքից կ'օգուեն այն բոլոր ազգերը, որոնց համար ազգաբնակչական շարժումներն ստացել են առանձին կենսական նշանակութիւն: Եւրոպական ազգերին մէջ այս խնդրով ամենաբոլոր շատ զբաղուած է Պրանսիան, որովհետեւ այս երկրում նա շատ սուր կերպաբանք է ստացել: Համեմատած հարեւան երկիրներին ազգաբնակչութեան թւի հետ, Պրանսիա յետամնաց դրութեան մէջ է: Թշնամիներն, օգտուելով այս առիթից, սկսել են խոցել Ֆրանսիական ազգին եւ յանդգնում են մինչեւ անգամ նորա քաղաքակրթութեան մեծութիւնը հերքել: Թթու ազգաւելներն էլ իրենց կողմից աղաղակ են բարձրացրել եւ անքնակալ միջոցներ են առաջարկում ազգաբնակչութիւնն աւելացնելու համար: Ազգաբնակչութեան մասին խօսելիս՝ պէտք է աչքի եւս նետել ոչ միայն նրա աւելանալը այլ եւ պակասելը: Իրողութիւնը այն է, որ ազգաբնակչութիւնը եւրոպական բոլոր երկրներում պակասում է: Վերակազմական թւերը բարեբախտաբար ապացուցում են մեզ այդ բանը եւ փարատում այն սխալ կարծիքները, որոնց առելով դուրս է դաշի, որ իբր թէ Պրանսիան բարոյապէս ընկել է եւ այլաւորել: Պէտք է իմանալ թէ գլխաւորապէս ի՞նչ պատճառով են ազգերը պակասում կամ աւելանում: Անկասկած՝ թիւը մասամբ միայն գրական կան է մի ազգի ուժը: Սակայն ազգային քաղաքակրթութիւնը միայն կոպիտ ուժով չափարի չափել, այլ եւ մասնաւոր այն գործերով, որոնք ամրացնում են նորա բարոյական ինքնությունը: Ոչ, Ֆրանսիական ազգը որ յնգճան մեծ է եւ առաջնակարգ, որքան անցանում, հնայած իր ազգաբնակչութեան թւի անմեծատական փոքորութեանը: Այդ տեսակէտից վիճել անգամ աւելորդ է: Ով կարգացել է Ֆրանսիական նորագոյն պատմութիւնը, նա կը պնդի տօսնից վարանման, որ այդ ազգը

փոռաւոր գործեր է կատարել յօգուտ մարդկութեան: Ծնւարթ է, որ նա այս վերջին երեսուն տարուայ ընթացքում փակած մնաց մի որոշ շրջանակում, բայց առանց հրաժարուելու իրան յատուկ զիջից: Նա պիտի հաւաքէր իր բոլոր բարոյական ուժերը, որոնց լարել էին պատմական սարսափելի պայմանները: Վերանորոգում՝ նա ներկայումս սպասում է այն վսեմ բույնին երբ արդարութեան զրօշակը ձեռքին, կարող կը լինի փսիւլ այն գործունէութիւնը, որի համար կոչուած է ներառ հանճարը:

Ազգաբնակչութեան խնդիրը սերտ կապ ունի տնտեսական եւ ընկերական պայմանների հետ: Հետեւաբար ազգաբնակչական թւի իջնելու կամ բարձրանալու գաղտնիքը առաւելապէս նոյն այդ պայմաններին մէջ պիտի որոնել: Այդ պայմանները յատուկ են բոլոր եւրոպական երկիրներին եւ համարեա թէ մինչև նոյն են ամեն տեղ: Թւերը մեզ կ'ապացուցեն, որ այս ենթադրութիւնը ճիշտ է: Անգլիայում 1876 թւին ամեն մի հազար բնակիչ վրայ ընկնում էր 34,8 ծնունդ: Իսկ 1833 թւին —արդէն 30,6 0/0: Գերմանիայում 1876 թւին —49,9 0/0 ծնունդ: Իսկ 1883-ին—36,7 0/00 ծնունդ: Իտալիայում 1876 թւին —39,2 0/00, իսկ 1886-ին—36,6 0/00: Վերջապէս Պրանսիայում 1876 թւին, հազար մարդու վրայ ընկել էր 22,6 0/00, իսկ 1886-ին —22,1 0/00: Պատկերից պարզ երևում է, որ ծնունդների պակասելն ընդհանուր երեւոյթ է: Այս երեւոյթի մեկնութիւնը զերուրթեամբ կը գտնենք եթէ Թերթիւլը լինելու տնտեսական պատմութեան 19 դարի երկրորդ կէտում: Մինչեւ 1875 թականը արդեւնաբերութեան գործը մեծաւ մասամբ կատարւում էր մարդկային ձեռքի օգնութեամբ: Բանորրը միշտ գործ էր զտնում: Նրի.թական ապահովութիւնը ազգում էր բանորրի ոգու եւ մեքի վրայ: Ընտանիքի բազմամարդութիւնը չէր աւելացնում նրա մտառանջութիւնն պատճառող հոգսերի թիւը: Բանորրի կինն ու երեխան՝ կրցող հասակում, նոյնպէս աշխատում էին եւ սպասւում իրանց ապրուստը: Գոյութեան կուուր պայմաններն անտանելի էին: 1875ին՝ երեւան են գալիս արդեւնաբերութեան այլ պայմաններ: Մարդկային ձեռքի տեղն հիմա բռնում է մեքենան: Մեքենական ուժով կատարող արդեւնագործութիւնը գուրս է մղում մար-

զուհե անձեռնառու դատած Ֆիդիլթական ուժը : Այս փոփոխութիւնը իջեցրեց աշխատանքի նախկին զինը : Բանուարն անկարող էր այնուհետեւ օրավարձով ապահովել իր տարուստը : Աշխատանքի պայմանների փոփոխութիւնը առաջ բերաւ բանող եւ գործող դատակարգների մէջ այլ կարգի սովորութիւններ եւ ցանկութիւններ : Բազմամարդ ընտանիք ունենալը մի ծանր եւ անտանելի բեռ դարձաւ մարդկանց համար : Այս հայեացքը թափանցեց եւ վարակեց աշխատանքի թիւան գրեթէ բոլոր խաւերը եւ ուն զաւ այն հետեւանքը , որ այժմ արտադրատեղում է ծնունդների պակասման մէջ : Մեքսիկական արդիւնաբերութիւնը անխուս՝ փելի դարգացման գործ էր եւ պիտի կերպարանափոխող ազդեցութիւն ունենար ազդեցականութեան վրայ : Բացի այս հիմնաւոր պատճառը , անտեսական եւ քաղաքական տաղանդները փոփոխում են ազգաբնակչութեան թիւը , բայց ոչ տեւողապէս : Ժրխակ՝ Պրուսիայում 1860 եւ 1869-72 թւերին ստակալի պատերազմները ծնունդներ թիւը նւազեցրին 23-32 ամիս մի հաղարկ վրայ : Յետոյ ներքա տեսական բարդաւած տարիներում 1881-1892 թիւնուղների թիւը նորից սկսեց բարձրանալ մինչեւ 28 0 00-ով : Գաղով Ֆրանսիային , նախ պատերազմի ու ներքին կարճատեւ ապստամբութիւնը 1869-71 թ. , իջեցրին նրա ծնունդներ թիւը 21-45 0/00 : Իսկ 1881-83 տարիներում ծնունդներն արդէն աւելացան 19-մինչեւ 28 0 00 : Բուսկիներին այդ աւելացումը կը շարունակուէր կանոնաւոր կերպով , եթէ Ֆրանսիան չ'ենթարկուէր տնտեսական մի նոր դժուարութեան : Ինչպէս յայտնի է , ֆիլիպինա կոչուած հիւանդութիւնը 1891-1892 թ. բոլորովին ոչնչացրեց ֆրանսական խաղողէնիները : Վնասը հասաւ 3 միլիարտ ֆրանկի : Տնտեսական հարստութեան այս կորուստը ծնունդների թիւը իջեցրեց 43-մինչեւ 44% : Իւրաքանչիւր հաղարջնակի վրայ , թւերը ուրիշ երկրներին վերաբերումը մասանանիշ են անուժ : Ինչեւոյն երեւոյթներ : Սակայն եւ չեմ ուզում այդ թւերով յոգնիցնել ընթերցողին , իմ նպատակըն է ծանօթացնել նրա խնդրին իսկութեան հետ : հիմնուելով մի քանի փաստերի վրայ : Միայն պէտք է կրկնել , որ ազգաբնակչութեան պակասումը ներկայումս մի ընդհանուր երեւոյթ է եւրոպայում : Գերմանիայում

եւ Անգլիայում բնակիչներն աւելանում են համեմատաբար աւելի քիչ , քան ուրիշ մասում : նախկին , իսկ Ֆրանսիայում բնակիչները չեն պակասում : Այստեղ միայն աւելացում չկայ : Սոցա ազգաբնակչութիւնը անչարժ է , թէեւ վերջին զինակցորութիւնը 1901 թ. ցոյց տուեց , որ նա աւելացել է ւտա 500,000 հոգով : Յամենայն դէպս ազգաբնակչութեան խնդիրը պէտք է լուծուժ ստանայ ներկայումս եղող հասարակական պայմաններում : Սխալ բան է խնդրի անբաւարար կերպարանքը միմիայն ազգային սովորութիւններին եւ յատկութեան ներքին վերաբերել : Եւսակած մարդկանց կամքը եւ միտ ոգեկան յատկութիւնները կարող են չըջապատող իրերին նպատակալարմար ուղղութիւն տալ , բայց միջավայրն է ձեւակերպում մարդու կամքն ու նորա հոգեկան յատկութիւնները՝ առանց նրանից խելու ընածին ինքնուրոյնութիւնը : այնպէս որ սխալ եւ անհիմն է պատասխանատու դարձնել Ֆրանսիայի ժողովրդական բարքերը մի երեւոյթի համար , որի մեկնութիւնը պէտք է հասարակական պայմաններում որոնել :

Եւրոպական հասարակութեան ուշաք ներկայումս շատ է զբաււած նաեւ այն յայտնի խնդրով , որ վերաբերում է երկրագործական տաղանդներ : Ներկայգործութիւնը գտնուում է նեղ վիճակի մէջ : Պարզեց խնդրեր , ժողովուրդներն աճումը պահանջեց երկրագործական արդիւնքների առատութիւն : Աւելացող պահանջին բաւարարութիւն տալու համար՝ պէտք էր ընդարձակել երկրագործութիւնը : Այս նպատակին չէին կարող ծառայել երկրագործական իրն եղանակները : Անհրաժեշտ էին նոր գործիքներ : Սրանց ներմուծումն աւելի հեշտացրեց երկրագործական արդիւնաբերութեան գործը : Ֆիդիլթական աշխատանքի տեսքը , որ բազմաթիւ գիւղացիական ձեռք էր բռնեցնում , բռնեցին մեքսիկաները : Սրանց օգնութեամբ երկրագործներն սկսեցին աւելի շատ արդիւնաբերել , քան թէ պահանջ կար : Ուստի եւ շուկաները արդիւնքներով լցուեցան : Նայալով բան է , որ շատութեան պատճառով արդիւնքները գններ ընկնելը անխուս՝ սովելի էր : Ի բաց առած մի քանի երբեմն տեղի ունեցող անբերի տարիները , որոնք ձեռնառու են առատ բերք . ստացող երկրներն , գներն ընկնելը մշտական է դարձել : Հացհատիկների շատութիւնը սաստկացրեց մեր

ցումը եւ այս հանդամանքը դիւզացիները զը-
ցեց շատ նեղ դրութեան մէջ, նրանք չէին
կարող ստոր գնեցով ծախած արդիւնքների
եկամուտից թէ իրանց պարել եւ թէ ծածկել
արած ծախսերը: Զարաւառեալ նրանք պիտի
իրանց պակասը լրացնէին պարտքերով: Օ-
րինքները գիւզացիներին թոյլ են տալիս զը-
րաւ գնել իրանց հողերը: Հեշտ է դրաւ զը-
նելը, բայց դժուար եւ անհնարին է լինում
գրաւ գրած հողը թափելը: Դրաւ գրած հո-
ղերի մեծ մասը ծախուում է անուրդով եւ գիւ-
ղացիները հանդիսանում են միանգամայն զըր-
կան իրանց հողային սեփականութիւնից: Սա
վաստ է, Միայն աւելի զարեւոտելին այն է,
որ գիւղացիները աշխատանալուց յետոյ էլ չեն
մնում գիւղերում, որ անդ երկրագործութիւնը
նրանց տարւայ մէջ մի քանի ամիս գործ է
տալիս, այլ գաղթում են քաղաքները մշտա-
կան գործ ճարելու նպատակով: Այնտեղ նը-
րանք ամենից առաջ խտացնում են եղած բան-
ւոր պրոլետարիատի շարքերը: Ապա գիւ-
ղում ապրող մարդը զրկուում է այն առաւե-
րութիւնից, որ բացօդեայ կեանքը ուղիւ էր
նրան: Նա ընկնում է ֆիզիքային եւ բարո-
յապէս: Նրա ողբկան աշխարհն էլ այլանշակ-
ւում է: Նա զո՞ն է գնում այն արտառ կեան-
քին, որ ստեղծել են քաղաքային բանաւոր
դասակարգի զոյաւթեան պայմանները: Նա
թշնամանում է շրջապատող դրութեան դէմ:
Նա դառնում է անընդունակ բարձր խելալ
պահպանելու իր որսում դէպի զր եւ է նւթ-
բական գործ: Ու այսպիսով քաղաքները մե-
ծանում են անընդհատ եւ թանգացնում ապ-
րուտը: Առհասարակ քաղաքները գաղթող
մարդիկ հրաաթափուում են, երբ չեն կարողա-
նում իրանց աշխատանքով ապրել այն կերպ,
ինչպէս օովոր էին ապրելու իրանց բնակա-
վայրում: Յամենայն դէպս բոլոր երեւոյթի վերջ-
նական հետեւանքները կորստաբեր են: Պե-
տութիւնները ստիպուում են ղրմելու դանազան
միջոցներ, որոնք հիմնաւոր եւ արմատական
չը լինելու պատճառով, մնում են ապարդիւն:
վերջնեանք հէնց օրինակ հովանաւորող մաքե-
րի գործադրութիւնը, կարծում են, որ ըլլոր
միասը առաջ է գալիս օտարերկրեայ արդիւնք-
ների մրցումից, Ու որպէս զի արտադրի մըը-
ցումը չէզոքանայ եւ մայրենի արդիւնքները
գերծ մնան նրանից, հովանաւորող մաքեր են
գնում ներմուծող երկրագործական արդիւնք-

ների վրայ: Հասնո՞ւմ են արդեօք դրանով ա-
ռաջագրած նպատակին: Փաստերը վկայում են,
որ գործ դրած միջոցների տաճ օգուտը չնիթի,
է: Նախ մաքսերից որոշ ժամանակ օգուտւում
են խոշոր հողատէրերը եւ չարչիւնները: Նա
մանաւանգ վերջինները ինչեղնում եւ բարձրա-
ցնում են հացատիկների գները կամայականա-
բար, օգուտելով նպատաւոր հանգամանքներից:
Հարկաւ խոշոր հողատէրերն իրանց արդիւնք-
ներով ինչուում են շուկաներում, որոնք սկզ-
բում ազատ են լինում օտար մրցումից: Բայց
հաղորդակցութեան միջոցների կատարելա-
գործութիւնը այնտեղ ինչեղնում է հացատիկ-
ների ճանապարհանախը եւ հովանաւորող մա-
քսերը դարձնում է անպօր եւ անպէտք: 190
թ. մի կիսեալ ցորենի ճանապարհանախը
Լօնդօնից մինչեւ Փարիզ նստում է 1,50 ֆրանկ
Մի կիսեալ¹⁾ ներմուծող ցորենի վրայ 7 ֆը-
րանկ հովանաւորող մաքս է դրած, այնպէս որ
Պարիզում այդ ցորենը պիտի արժենայ իր իսկ
կական քնից 8,50 ֆրանկ աւելի: Ու չը նա-
յած այսքան մեծ մաքսին Լօնտօնի եւ Պարիզի
գների մէջ տարբերութիւնը լինում է 1,50 ֆը-
րանկ, այսինքն Լօնտօնի ցորենը Պարիզում
1,50 ֆրանկ միայն աւելի արժէ: Բայց երբ
մեծ է ցորենի պահանջը, այն ժամանակ այն
դանապարտութիւնն էլ կորցնում է իր նշանա-
կութիւնը եւ ապրանքն էլ մեծ քանակութեամբ
մանում է: Պարսնակ: Օրէնսդրութիւնները
հացատիկների առեւտրի վերաբերմամբ փոփո-
խական են: Նրանք մերթ բարձրացնում են
մերթ ինչեղնում են մաքսը, յարմարուելով տա-
րաշխարհի շուկաներում առաջ եկող նոր
սրայմաններին: Այդ փոփոխութիւնից ամենից
շատ օգուտւում է չարչիւնները, որ կապիտա-
լիստ հասարակութեան ծնունդն է: Սա մեծա-
մեծ միասնեք է հասցնում թէ արդիւնաբերող-
ներին եւ թէ սպառող հասարակութիւնը, պա-
կանցներով գները՝ ապրանքը արժան առնելու
համար, եւ աւելացնելով՝ թանգ ծախելու նպա-
տակով: Գապիտալիստ հասարակ լիքեան այն
զգուշելի վէրքի դէմ կուեղու միջոցները պէտք
է խտտանա մի օր: Ցուրը կը վերանայ, երբ
արդիւնաբերութիւնը թերող սրայմանները վե-
րափոխուելով՝ ընդունակ դառնան արմատից
կորելու չարչիւնութեան աւելի մեծեանալու
թիւնները: 1898 թ. ամբողջ աշխարհի ցորենի

1) Ռուսաց 5 պուդ, այսինքն 80 քիլո:

արգելանքներու թիւնը հասել էր 1 միլիարդ 55 միլիոն հեկտարի տրի։ Մի թիւ, որ Եւրոպայում մեծ առևտրի գործ է դարձել։ Այսքան արգելանքի մաքսային կապանքներէք ազատ առևտուրը արդարեւ կարող է թեթեւացնել պաւտոգ հասարակութեան ապրուստը։ Դրանով նամանաւանդը թեթեւանայ ջաղաքներում ապրող շուներու զատակարգի ծախսերը։ Այնու ամենայնիւ ցաւալի եւ հիասթափեցնող հանգամանքը այն է, որ ոչ ցորենի ազատ առևտուրը եւ ոչ էլ յիւշտե կերպի մաքսերը գիւղացիութեան չեն փրկում սեփականաւթութիւն կորցնելուց։ Ճաւն օրգանական է եւ ոչ պատահական, ուստի սրա դէմ գործ դրած միջոցներն եւս պիտի արմատական լինին։ Այս է կենտրոնակէտը երկրագործական տաղանապի ինքրութիւն, որն ահա կէս դարից աւելի է որ ճորտնիկական բնաստութիւն է ստացել։ Եւրոպայի ընդհանուր ուշագրութիւնը ներկայումս շատ լարւած է այդ խնդրի վրայ եւ զեռ եւս չեն կարողացել մի ելք գտնել գիւղական ազգաբնակչութիւնը քայքայող այդ կորստի դէմ։ Տեսէք թէ, օրինակ, որքան է աւելացել աճուրդով ծախուող հողերի թիւը Ֆրանսիայում—1878 մինչեւ 1890թ. այսինքն 12 տարւալ ընթացքում է 1878 թ.—1370 վաճառում է հզել, մինչդեռ 1890 թ. վաճառումների թիւն արդէն հասնում է 13,944-ի։ Մախուղ գիւղական հողերի այսօրինակ արագընթաց աճումը ապացուցում է, որ գիւղացիութիւնը աստիճանաբար զրկւում է իր հողային սեփականութիւնից եւ ճարհանաւած սկսում զաւաճալին պրոլետարիատի կեանքը վարել։ Մի՞թէ այս երեւոյթը վնասեցուցիչ չէ պիտի լինի Ֆրանսիացու համար։

Գիւմարիայում գրութիւնը աւելի եւս վատթար է։ Գիւղական հողերը ամենուրեք յանձնւում են զբամասէնէրի ձեռքը։ Վերջինի 20 տարւալ ընթացքում արժէթղթերը անհաստատ են դարձել եւ ենթակայ են զանազան կորուստեք փորձանքների։ Դրամատէրերը արժէթղթերի փոխանակ իրանց փողերով գիւղական հողեր են գնում, կատարելագործւած ձեւերով գիւղատնտեսութեամբ պարապելու համար։ Այն հողերը, որ Ֆրանսիայում 1880 թ. միւլ էին հարկւր միլիոն հեկտարից ցորեն, իրանց արդիւնքն 1890ին հասցրել են, խոշոր հողագործութեան նորոգով 122 միլիոն հեկտար լիարի։ Թէ ինչ կերպարանք կ'ստանայ կապա-

գայում դեռ եւս նոր երեւոյթ կազմող խոշոր հողատէրութեան վիճակը, այդ մասին զեռ եւս չառնչին վիճում։ Սարսափ յարուցանող խնդիրն այն է՝ թէ ինչ միջոցներով պիտի կուել ջաղաքները կաղթող հասանքի դէմ, որ լեզնեններ է կազմում։ Մի ժամանակ շատ զոված գիւղական վարկը իր բոլոր սովորական ձեւերով այլ եւս անընդունակ է գիւղացուն կորստից փրկելու։ Փոխառութեան այդ նաւցած ձեւերով մասն հողագործներն անգոր են խոշոր հողագործներին հետ կիւն մղելու։ Հեռեւեալար մասն հողագործութեան տապալակ բաւականին մեծ է։ Եւրոպական հասարակութեան նա զգացնել է տալիս, որ ցաւը խոր արմատ է գցել տնտեսական կազմի մէջ։ Միւս կողմից գիւղից եկած մշակ մարդիկ սկսում են մրցել ջաղաքային բանւորներին հետ, ուստի վարձագինը պէտք է անպայման ընկնի։ Եւրոպայի գործադուլը, Բէնէ այս ձեւի բողոքը մի գեղեցիկ ապացոյց է տնտեսական այդ մասնների ալլանդակութեան, բայց եւ այնպէս գործադուլից ամենից առաջ նիւթապէս օգտւում են դարձեալ նոյն գործարանատէրերը։ Սրանք գործադուլի ժամանակ անաղացնում են իրանց աւելորդ ապրանքները, որոնք չէին ծախւում։ Ինն տարուայ ընթացքում, 1890-99 թ., միայն Ֆրանսիայում 4,210 գործադուլ է եղել, որին մասնակցել են 924,876 բանւոր։ Գործադուլը տանելի է թերեւս, բայց ինչ կասէք այն բանւորների զրուծեան մասին, որոնք յաճախ բողոքովին անգործ են մնում։ Սա մի նոր խնդիր է, որ առիթ է տալիս մըտածելու, թէ արդե՞ք ներկայ աշխատանքի ձեւը չէ հնացել եւ անպէտքացել։ Սրանից 30 տարի առաջ անգործութիւնը մի անցողական երեւոյթ էր։ Ներկայումս նա մշտական է դառել։ Նոյնպէս իր լուծումն է պահանջում Եւրոպայում տարւայ կրեք կամ չորս ամիսը բանւորների մի որոշ մասը պարապ է մնում եւ գործ չի գտնում։ Նման դրութիւնը երբ կրկնւում է, բանւորներին ընտելացնում է թափառաշրջութեան, այստեղից անտեղ գնալուն։ Որ շատ անգամ նպաստում է յանցաւորների թւի բազմանալուն։ Շատանանք մի քանի օրինակներով։ Ֆրանսիայում 1896 թ. մարտ ամսին երկուս սեռի անգործ մնացածների թիւ-

ւը 269,600 էր։ Սրանց անգործութիւնը տարւայ մէջ միջին թւով տեւել է երկու ամիս։ Պրուսիայում 1895 թ. դեկտեմբեր ամսին անգործ էին մնացել 553,676 բանւոր երկու անոց եւ տարւայ ընթացքում երեք ամիս շաբաթական, թւերը շատ ոչտափելի են նաեւ։ Անգլիայի վերաբերմամբ ։ Որովհետեւ անգործութիւնը հետզհետէ ծաւալուում է, հարց են բարձրացնում մասնուրէ մէջ թէ ի՞նչ է այս նոր երեւոյթի պատճառը։ Մինչեւ այժմ ամենքից խելացի եւ զբաղման պատասխան՝ գոյութիւն ունեցող բանւորական ընկերութիւններն են ունել։ Սրանք միանայն այդ երեւոյթը վերադրում են մեքենաների ներմուծման, որոնք վաւերացնին ձեռքի աշխատութիւնը եւ նրա տւելն այնպիսի կերպագրւած, որ ներկայումս անգործութեան են մատնում բազմաթիւ մշակ մարդիկ։ Մեքենայական աշխատանքը անգէն է դարձնում բանւորներին։ Եթէ պայմանները չը փոխւին խնդրին լուծումն տալու համար, այն ժամանակ կըրպագրւած, ճիշտ է երեւակայել թէ ինչ մեծ վտանգ կը ներկայացնի հասարակութիւններին համար բազմաթիւ անգործ բանւորների կուտակումը։ Մեքենայական արդիւնաբերութիւնը գրեթէ պաշտօնում է իր գործերով։ Հիւսիսային Ամերիկայում 10-15 տարեկան 3 բանւոր 236 ժամուկ մէջ 20 տուրք ծախսով պատրաստում էին 20'000 մեխ։ Այսօր նոյն ապրանքի քանակութիւնը պատրաստում է մեքենան 1,49 ժամում, 0,29 զօլլար ծախսով։ Ստացած օգուտը երկու տեսակ է, նախ ժամանակի խնայողութիւնը, եւ ապա նրա հետ միասին մեծ վատտակ արդիւնադրողի համար։ Ուր որ մեքենայական աշխատանքը մուտք է գործել, այնտեղ նրա ընթաց օգուտը արդիւնադրողին է պատկանում ոչ բանւորին։ 1861 մինչեւ 1881 թ., այսպես տարում մօտ մէկ միլիոն բանւոր մնացել են անգործ, որովհետեւ մեքենան ըռնել է սրանց տեղը։ Անգլիական 17 կարգի գործարաններում 1861 թ. բանել են 3,912,138 բանւոր։ Տաս տարի յետոյ, այսինքն 1871 թ., արդիւնաբերութեան նոյն 17 ճիւղում բանել են 3,393,902 բանւոր, այսինքն 518,000 մարդ անգործ մնացել են դուրսը մեքենաների պատճառով։ 25՝ որ փաստերը բուսականին ազդեցիկ են հասարակութիւններին յիշեցնելու համար թէ նրանք պարտաւոր են վերափոխել աշխատանքի պայմաններ։ Եթէ տէրութիւններն աշխատում են ապա-

նովի գործ ունեցող բանւորներին, ինչո՞ւ չպիտի միջոցներ որոնեն անգործ բանւորներին եւս ապահովելու համար։

— Ես կարծում եմ, որ ընթերցողը մասնաւորապէս ծանօթացաւ մէ քանի խոյոր հասարակական խնդիրներին հետ, որոնք վերջին քսան տարուայ ընթացքում սուր կերպարանք են ստացել Եւրոպայում։ Հետաքրքրական խնդիրներ շատ կան, բայց մեր յիշածները այն խնդիրներին են, որոնց լուծումը պիտի ապագայում կերպարանափոխէ եւրոպական հասարակութիւնը։ Յաճախ արտայայտուող այս կարծիքը իբր թէ Եւրոպայում ամէն ինչ բարձրագոյն դրութեան է հասել, սխալ է միանգամայն։ Իրաւ է, արդիւնաբերութիւնը արել է ահագին յառաջդրումներ։ Պարիսի 1900 թ. ցուցահանդէսը աշխարհ զարմացրեց եւ հիացրեց։ Ֆրանսայի, Անգլիայի եւ Գերմանիայի եւ Ամերիկայի գործերով ու արուեստներով։ Մտաւոր կողմից եւս ամենքը մեծամեծ քայլեր են արել։ Բարբից այդ կողմից անվճեկ է։ Սակայն հասարակութեան որոշ զսպակարգերն են միայն առաւելագոյն օգուտել այդ բարբից։ Ունեւոր կամ իշխող զսպակարգերն անընդամեն հարստացել են։ Ազգաբնակչութեան հպատակ եւ չունեւոր մասն ընդհակառակն շաբաթականում է տակաւին զեգբերի զբաղմունքներում։ Մարդկանց այդ դասը բազմացել է թէ զիւղից զաղթողներով եւ թէ անգործ ուսում առածներով։ Մի խօսքով պրոլետարիատն ամենուրեք խտացել է եւ խտաւ յիշեցնում է, որ զսպակարգերի մէջ եղած յարաբերութիւնները լարում եւ վաթխարանում են, փոխանակ լուսանալու։ Մի ժամանակ երբ որ խնդիրները դեռ չէին հասել զարգացման այս աստիճանին Եւրոպան երեքմասկե օգեւորում էր ամէն մի արդար գործի համար։ Նա իւր արիւնը չէր խնայում արդարութիւնը վերականգնելու, երբ նա խախտուած էր լինում։ Նա պայտապանում էր թոյլին եւ փրկում կորստից ամէն մի աւերաւորութիւն որ կտարւորում էր Եւրոպայից զուր, անպատիժ էր մնում ։ այդ ժամանակն անցել է արդէն։ Հիմա Եւրոպան ետաւէր եւ նրա թապալտ է։ Նա, կարծես, հետացել է իտէալներից ։ նա գառել է երկչոտ կատարելու համար մի գործ՝ ընդունակ նորից վերականգնելու լուսաւորութեան վարկը, որ արդէն սկսել է ընկնիլ բազմաթիւ որոշ ազգերի աչքում։ Նա նաւումններ է անում շահագործելու դիտաւե-

րութեամբ, ա՛յնքան կաշկանդել է ազահու-
թիւնից ի Բայց մեծ յոյս կայ, որ մօտիկ ապա-
գայում ժողովուրդներին ինքնաճանաչութիւնը
յառաջ կը բերի պայմաններին մի նոր գասաւու-
րութիւն, որտեղ արդար դործը միշտ իր լուս-
նումը կը տանայ լուսնի մի րունտ թիւն չի կարող
այս ինքնաճանաչող ընթացքին հակառակել,
որովհետեւ սա է ժողովրդական հոգեբանութեան
օրէնքը՝

Պարիզ

ԳՐԻԳՐԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՀԱՅԿԵՐՈՅԻ Ի ՊԱՏԻԻ

Գ. ՊՐԱՆՏԵՍԻ

Մայիս 19ի իրիկուներ. Փարիզի գրական քըն-
նադատներու ընկերակցութիւնը հաջկերոյթ մը
տուաւ. Մարիբրի ճաշարանին մէջ ի պատիւ տա-
նիմարքացի աշխարհահռչակ քննադատ Գէորդ
Պրանտէսին, որ անլիճելի կերպով ամենամեծ
քննադատն է որ Եւրոպայի մէջ երեւցած է
լիպիլոյթի ինչնէն ի վեր:

Ներկայ էին հարիւրի շատ գրագէտներ, ա-
րուեստագէտներ, քննադատներ եւ ուսու-
ցիչներ, մեծ մասամբ օտարազգի, — տանիմար-
քացի, ֆինլանտացի, չուէացի, իտալացի,
ռուս, հայ, եւնի, Գրանտէսի գրականութեան
ու. քննադատութեան ներկայացուցիչներէն
շատ քիչըր կային — Կասթոն Տէչան, Տիկին
Սելվին, Փիէր Գիլյար, Լուի Տիւմիւր, Հանրի
Պարպիւս, եւնի:

Գ Կասթոն Տէչան, որ կը նախագահէր, յա-
նուն ֆրանսական քննադատութեան ողջունեց
Պրանտէսը եւ յայտնեց անոր իր ֆրանսացի
եզբարակիցներուն հիացումը. պ. Սեմնոֆ խօ-
սեցաւ յանուն ուսուցիչականութեան եւ Պրան-
տէսի գործին ազնկցութիւնը ի վեր հանեց հիւ-
սիսային գրականութեան վրայ. պ. Մատտէն,
Տանիմարքացի, Դանիլոյ գրական նոր սերուն-
դին երախտագիտութիւնը եւ սքանչացումը
յայտնեց. պ. Չօպանեան խօսեցաւ յանուն հայ
գրականութեան:

Տիկին Սելվին, յանուն ֆրանսացի կիսնա-
րուն, արտասանեց հոյակապ բաժակաճատ մը.
ներողիւով աշխարհաքաղաքացի ոգին. ազգե-
րու միջեւ պտտուարները քանդող այսպիսի
գոստարներու օգտակարութիւնը գովեց, եւ
յայտարարեց թէ ֆրանսան իրիւն ազգակից ու
արիւնակից պէտք է համարի (ինչպէս երբեմն)
բոլոր այն ազգերը որ կը տառապին ու բոլոր

այն տաղանդները՝ ինչ ցեղէ՛ ալ ըլլան՝ որ
նոր գեղեցկութիւն մը կը բերեն աշխարհիս:

Մրամիտ Թօթիով մը, Պրանտէս իր շնորհա-
կալութիւնն յայտնեց ու արդի քննադատու-
թեան գերն ու ճակատագիրը բացատրեց:

Անա բաժակաճատը զոր արտասանեց ձեւ-
նահիտ»-ի տնօրէնը:

« Սիրելի վարպետ,

«Դուք մին եղած էք այն թանկագին մտքե-
րէն որոնք յաղթականօրէն ապացուցին ան-
ճշշողութիւնը հին առածին՝ «քննադատութիւնը
դիւրին է, արուեստն է դժուար» առած որ յաւա-
ցուած է այնպիսի ժամանակներում երբ քըն-
նադատութիւնն ուրիշ բանի մէջ չէր կայա-
նար յայց կիճէ դատելու. թէ գործը կանոննե-
րուն համաձայն է կամ ոչ, Թ. եւ Թ. Գարբիը,
զորոնք կարելի է քննադատութեան դարեր»
անուանել՝ այդ բառին ամենալայն իմաստովը ք-
ննադատութիւնը արուեստի մը աստիճանին
բարձրացուցին, ՝ Գնահադատ ստեղծողներու
գործին տեսակ մը մակարոյնն ըլլալէ դարեւ-
ցաւ. ստեղծող մը դարձաւ. ինք ալ կատարեցաւ.
նեղով գործ մը որոշուպէս անձնակաւ. որ ինք
իրով կ'ապրի, որ ինքնուրոյն արժեք մը եւ
նշանակութիւն մ'ունի, սա միակ տարբերու-
թեամբ որ արուեստագէտը կամ զրագէտն իր
գործին համար իր նախախիթ կ'աւանդէ ինչ-
կան կեանքը՝ այնպէս ինչպէս իրերու. որաւ
մաքանութիւնը զայն կը յօրինէ, մինչդեռ քըն-
նադատն իր գործին համար իրը նախախիթ
կ'աւանդէ մասաւոր կեանքը որ արուեստագէտնե-
րու հոգիին ու իրականութեան բաղխումէն կը
ժայթքէ ձեր ձեռք. դարու գրական մեծ հո-
սանքներ» Ի սիրելի վարպետ, ճշմարիտ դիւ-
ցաղներգութիւն մըն են. ուր գաղափարներու,
ձգտումներու, անհատական կամ հաւաքական
հոգեբանութիւններու պայքարն է որ գործողու.

թիւնը կը կազմէ եւ ուր ստեղծագործ հան-
ճարներն են որ հերոսներու կը ձեւապնեն:

«Նոր ժամանակներու մտքին ամենէն կարեւոր
եւ ամենէն յատկանշական արտայայտութիւն-
ներէն մին է ուրեմն որ կը տնօրէն այս մեծա-
րանքին մէջ զոր ֆրանսական քննադատութեան
վարպետները կը մատուցանեն ձեր գործին:

«Ինչոք թաղաքակիրթ ժողովուրդները մտքով
կը մասնակցին այս իրիկուն, վստահ եմ, այս
մեծ արանքին, որովհետեւ ձեր գործը բովան-
դակ խորհող մարդկութիւնը կ'ընդգրկէ՝ ճշ-
մարիտ «այախարհաքաղաքացի» դուք հասկցած
ու թարգմանած էք Գեղեցկութիւնը ամեն ուր
որ զայն գտած էք, առանց որ ձեր տեսողութիւնը
բնաւ երբեք պղտորուէր ցեղերու տարբերու-
թիւններէն կամ երկիրներու եւ գրական հետա-
ւորութիւններէն Անկից գտա՝ դուք արեւմտի էք բու-
լոր մարդոց երախտագիտութիւնը վայելիւ, ոչ
միայն որովհետեւ ըմբռնած էք ինչ որ կայ
այնին, ու բարձր՝ բոլոր ցեղերու գեղեց-